

ՊԱՏԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ - 2016

ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ՓՈԻԼ, 6-րդ դասարան, տևողությունը՝ 120 րոպե

Խնդիր 1: Գրատախտակին գրված էր ճիշտ հավասարություն:
Դասամիջոցին Արմենը փոխեց երկու թվանշան: Ստացվեց
 $4 \cdot 5 \cdot 4 \cdot 5 \cdot 4 = 2247$ ոչ ճիշտ հավասարությունը: Վերականգնել
սկզբնական հավասարությունը:



Խնդիր 2: $\frac{*}{*} + \frac{*}{*} = \frac{*}{*}$ օրինակում աստղանիշների փոխարեն գրել վեց տարբեր թվանշաններ
այնպես, որ բոլոր կոտորակները լինեն անկրճատելի, իսկ հավասարությունը՝ ճիշտ:



Խնդիր 3: Տղան հինգշաբթի և ուրբաթ օրերը միշտ ճիշտ է
խոսում, իսկ երեքշաբթի օրը միշտ ստում է: Մի անգամ նրան
յոթ օր անընդմեջ հարցրել են անունը: Առաջին վեց օրը նա
տվեց հետևյալ պատասխանները. Արամ, Վարդան, Արամ,
Վարդան, Պետրոս, Վարդան: Ի՞նչ պատասխանեց նա
յոթերորդ օրը:

Խնդիր 4: Դասարանում բացակա աշակերտների թիվը
կազմում է ներկա աշակերտների թվի $\frac{1}{5}$ մասը: Այն բանից
հետո, երբ դասարանից դուրս եկավ մեկ աշակերտ, ապա
բացակա աշակերտները կազմեցին ներկաների $\frac{1}{4}$ մասը:
Քանի՞ աշակերտ կա այդ դասարանում:



Խնդիր 5: 40 երեխա բռնել են շուրջապար: Նրանցից 22-ը բռնել
էին տղայի ձեռք, իսկ 30-ը՝ աղջկա: Քանի՞ աղջիկ էր
մասնակցում շուրջապարին: